

Երևանյան անշարժ գույքի շուկան 2009թ. ապրիլին

Երևան քաղաքում 2009թ.-ի ապրիլին գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ կատարված միայն առքուվաճառքի 571 գործարք, որի ցուցանիշը 2009թ. Մարտի համեմատ աճել է 12%-ով: Մայրաքաղաքում բնակարանների նակտմամբ կատարվող առքուվաճառքի գործարքների քանակական աճը ուղեկցվում է վերջիններիս գնային նվազմամբ: 2009թ.-ի ապրիլին Երևան քաղաքում միջին գինը 1 քմ բնակելի տարածքների համար կազմել է 272,600 դրամ, որի ցուցանիշը 6%-ով նվազել է 2009թ. մարտի ցուցանիշի համեմատ: Ապրիլին մաքսիմալ նվազումը տեղի է ունեցել Նուբարաշենում 13%,

իսկ մինիմալ նվազումը հանդիպել է Քանաքեռ-Զեյթունում՝ 3%: Ինչ վերաբերվում է կենտրոն համայնքին, ապա այնտեղ բնակարանների միջին գները 2009թ.-ի ապրիլին 2008թ.-ի ապրիլի համեմատ աճել են 3%-ով, իսկ 2009թ.-ի մարտի համեմատ նվազել են 6%-ով: Ըստ վիճակագրական տվյալների՝ 2009թ.-ի ապրիլին Երևանում բնակարանների գները 2008թ.-ի ապրիլի համեմատ նվազել են բոլոր համայնքներում, միջինում Երևանում այդ նվազման չափը կազմել է 8%: 2009թ.-ի ապրիլին, 2008թ.-ի ապրիլի համեմատ,

Համայնքներ	2008թ. ապրիլ	2009թ. ապրիլ	2009թ. մարտ
Կենտրոն	471,300	485,100	515,600
Արաբկիր	409,900	366,900	388,400
Զեյթուն	306,800	289,000	299,100
Նոր-Նորք	270,300	238,600	258,600
Շենգավիթ	274,200	252,000	264,700
Դավթաշեն	283,200	265,600	279,200
Սալաթիա	260,300	232,400	245,100

բնակելի տարածքների գնային նվազումը իր մաքսիմալ արժեքն է ընդունել Ավանում՝ 12% իսկ մինիմալ արժեքը հանդիպել է Քանաքեռ-Զեյթունում՝ 6%-ով:

Վարձակալության հատուկ առաջարկներ Պիկ Ռիելթիի կողմից



▲ Նորառոճ, կահավորված շքեղ բնակարան մայրաքաղաքի կենտրոնում: Այս ժամանակակից 190 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը ունի հիանալի նախագիծ: Լիովին կահավորված, լուսավոր և յուրահատուկ չորս սենյակները ջեռուցվում և օդափոխվում են: Բնակարանի հետ միասին տրվում է նաև անվտանգ ավտոկայանատեղի:



▲ Ձեր հանգիստ և հարամարավետ անկյունը Երևան քաղաքի կենտրոնում: Յուրահատուկ այս բնակարանն ունի 95 քմ ընդհանուր մակերես, ինչպես նաև ջեռուցման օդափոխման համակարգեր և արագընթաց ինտերնետային կապ:



▲ Յուրահատուկ երկհարկանի բնակարան, որը տեղակայված է Հանրապետության Հրապարակի անմիջական հարևանությամբ: Այս շքեղ երեքսենյականոց բնակարանն ունի 200քմ ընդհանուր մակերես, երեք սանհանգույց, ամբողջովին կահավորված է, ինչպես նաև ջեռուցվում և օդափոխվում է:

